

ԱՐԱՐԻ ՄԸ ԽԻՂՃԸ

1933 Յունիսին արարներու մէջէն ազատելով, Հայ Կարմիր Մաշը բե-
րած եւ Կիւրիինի Հայր. Միութեան յանձնած է Կիւրիինցի ձեմճեմէնց Պերպեր
Տիգրանին տղան Աւետիսը: Մէկ բառ հայերէն չգիտեր, արարերէն կը խօսին
հետը, մինչեւ որ հայերէն լեզուին վարժուի:

Գաղթականութեան շրջանին Աւետիս 4-5 տարեկան հասակին Բագդայի
անապատներուն մէջ կը կորսնցնէ իր մայրը եւ եղբայրները (մեռած): Այդ
կողմի էնչէ աշիրէթէն արար մը գինը կը տանի իր տունը եւ կ'որդեգրէ: Ա-
րարին կենը, որ մէկ աղջիկ գաւակ ունէր, Աւետիսը հարազատ գաւակի պէս կը
խնամէ եւ կը մեծցնէ: Կ'անցնին տարիներ, պատանի Աւետիս տան միակ նե-
ցուկը կը դառնայ:

Արարը իր փեսին եւ քիչ յետոյ աղջկան վրայ հասնող մահերէն ընկճը-
ւած կը հիւանդանայ: Մահամերձ ծերունին իր քով կը կանչէ Աւետիսը եւ
կ'ըսէ.—

«Մտիկ ըրէ գաւակս, ես պիտի մեռնիմ, Աստուծոյ առջեւ մեղքով չեմ
ուզեր երթալ. գիտե՞ս, դուն արար չես, դուն հայ ես, ժամանակին այս կող-
մերը շատ մուսախի (գաղթական) հայեր եկան, դուն որք երախայ մըն էիր,
ես քեզի իմ տունս բերի ինձի գաւակ ընելու համար: Հիմա մեծցար, կ'ուզես
դնա Հալէպ, հոն շատ հայեր կան, թերեւս աղգական մը դիտնես ու հայ ապ-
րիս, իսկ եթէ երթալ չես ուզեր, տունս, արտերս, ուղտերս, բոլոր ունեցածս
քեզի, ամուսնացիր արար աղջկան մը հետ եւ օճախը շնորհուր...»:

Արարը կը մեռնի: Աւետիս կը մնայ մինակը: Ծերունին վերջին խօս-
քերը խոր տպաւորութիւն թողուցած էին իր վրայ: Կը զգայ իր մէջ հայ ա-
րիւնին դրող ուժը, կը թողու իր առօրեայ աշխատանքները, կը լքէ տուն
ու տեղ ճամբայ կ'իյնայ հայու մը հոգիով: Բարեբաղտաբար իրեն ծանօթ
բարեբարներու օգնութիւնը շուտ կը հասնի: Աւետիս կու գայ Հալէպ եւ կը
միանայ իր հայրենակիցներուն, շնորհիւ Հայ Կարմիր Մաշի թափած ջանքե-
րուն:

ԿԻՒՐԻՆ 1958 – 1968 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Քաղաքին անձանօթ ըլլալով, մեր ընկիւղը եւ երթալիք տեղը որոշելու
համար, հրապարակի մը վրայ կանգ առինք: Չորս կողմերը խանութներ կա-
յին: Ճաշարանի մը առջեւ դրուած սեղանի մը շուրջ նստեցանք ու սուրճ ա-
պրսպրեցինք: Բոլորի ուշադրութեան առարկայ էինք դարձած:

— Հիմա, ուր է ուր չէ, պիտի դան մեզ հարցաքննելու, ըսի ընկերոջս:
Իրաւ ալ, հազիւ սրճարանի պատանի ծառայողը սուրճի մեր սկահակ-
ները սեղանին վրայ դրած էր, երբ քանի մը տարէցներ, քիթ-բերան չփելով
մօտեցան:

— Միքիապա՛... խոշ-պէշ, եւն.:

— Կը ներէք, ըսաւ անոնցմէ մէկը, կ'երեւի Անդարայէն կու դաք ու
հոս պիտի գիշերէք:

— Ինչէ՞ն պիտես թէ Անդարայէն կու դանք, ու ինչէ՞ն պիտես՝ թէ հոս
պիտի գիշերենք:

— Պիլմէմ, չեմ գիտեր... Ի՞նչ է այդպէս խորհեցանք...

Ու սկսաւ մեզ համոզել՝ թէ իրենց քաղաքին օգն ու ջուրը սքանչելի